ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՀԵԼ ՍԻՐՏԸ ՈՒՐԱԽ

Երջանկության կերտվածքը (Փիլիպպեցիս)
Մաս 4 - Փիլիպպեցիս 2:12-18

Երջանկությունը կորցնելու 5 ճանապարհները	Հակաթույնը
1. Վախը՝ թե մենք մենակ ենք	Համ 13
2. Անհանգստանալ և պայքարել փոքր բաների համար	Համ 14
3. Մեղավոր զգալ կամ ամաչել	Համ 15
4. Մոռանալ, թե Աստված ի՞նչ է խոստացել	Համ 16
5. Կենտրոնանալ միայն իմ անձի վրա	Համ 17-18

«Ահով ու դողո՛վ գործեցեք ձեր անձերի փրկությունը: Որովհետև Աստված է որ ձեր մեջ ներգործում է. կամենալն էլ, անելն էլ իր հաճության պես:» Փիլի 2:12-13

5 Մարզանք ուրախ սրտի համար

1. Հիշել, որ Աստված ինձ հետ է, իմ մեջ է և ինձ համար է

«Որովհետև Աստված է որ ձեր մեջ ներգործում է. կամենալն էլ, անելն էլ իր հաճության պես:» Փիլիպպեցիս 2:13

«Ձեզ որբ չեմ թողնի. կգամ ձեզ մոտ... այն օրը դուք կիմանաք, որ... դուք՝ իմ մեջ, ես էլ՝ ձեր մեջ եմ:» Հովհաննես 14:18-20

«Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ:» Հռովմայեցիս 8:31

2. Երախտապարտ լինել և երբեք չտրտնջալ

«Ամեն բան առանց տրտունջի և վիճաբանության արեք, որպեսզի Աստծու անբիծ ու անարատ զավակներ լինեք:» Փիլիպպեցիս 2:14-15ա

«Ամեն բանով գոհացե՛ք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը Քրիստոս Հիսուսով:» Ա Թեսաղոնիկեցիս 5:18

«Ասում եմ ձեզ, որ ամեն դատարկ խոսքի համար, որ մարդիկ խոսեն, դատաստանի օրը հաշիվ պիտի տան:» Մատթեոս 12:36

3. Խղճմտանքս մաքուր պահել

«Որպեսզի Աստծու անբիծ ու անարատ զավակներ լինեք, առանց մեղադրանքի՝ այն կամակոր և խոտոր սերնդի մեջ, որի մեջ երևաք որպես աշխարհում լույս տվողներ.» Փիլիպ. 2:15

«Երանելի են ճանապարհով անմեղները, որ գնում են Տիրոջ օրենքումը: Երանելի են նրա վկայությունները պահողները, որ բոլոր սրտով խնդրում են նրան:» Սաղմոս 119:1-2

«Երանի նրան՝ որի անօրենությունը թողվեցավ, և որի մեղքը ծածկվեցավ: Երանի այն մարդին, որ Տերն անօրենություն չի համարում նրան՝ և նենգություն չկա նրա հոգիի մեջ:» Սաղմոս 32:1-2

4. Անգիր անել Աստծո խոսքը և ապրել այն

«Կյանքի խոսքը պահելով...» Փիլիպպեցիս 2:16

«Քո հրամաններովը կուրախանամ. և քո խոսքը չեմ մոռանալ:» Սաղմոս 119:16

«Առաջնորդիր ինձ քո պատվիրանքների շավիղներումը. որ նրանց հավանեցիր.» Սաղմոս 119:35

5. Իմ կյանքով ծառայել Աստծուն՝ ուրիշներին ծառայելու միջոցով

«Բայց թեկուզ ձեր հավատի զոհին և պաշտամունքին ընծայվեմ, ուրախ եմ ու ձեր բոլորի հետ ուրախանում եմ:» Փիլիպպեցիս 2:17-18

«Ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, և նոր հոգի պիտի դնեմ ձեր միջումը, և վեր պիտի առնեմ ձեր մարմնիցը քարեղեն սիրտը և ձեզ մարմնեղեն սիրտ պիտի տամ:» Եզեկիել 36:26

«Ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև երկնքի ներքո մարդկանց տրված ուրիշ անուն էլ չկա, որով հնարավոր լինի մեզ փրկվել:» Գործք Առաքելոց 4:12

Հաջորդ Քարոզի Թեման:

«ԿԱՐԵԼԻ Է ՍՈՎՈՐԵԼ ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼ»

Հովիվ Սարո Խաչիկեան